

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն՝**

Քրիստինե Խանազադյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի միջազգային արբիտրաժներում և օտարերկրյա դատարաններում ՀՀ շահերի պաշտպանության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ավստրիայի Հանրապետություն, Վիեննա, 2024թ. հունվարի 21-27-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Գործուղման նպատակն էր ապահովել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) ներդրող-պետություն վեճերի լուծման հետ կապված բարեփոխումներով զբաղվող 3-րդ աշխատանքային խմբի 47-րդ նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները՝**

Նստաշրջանի ընթացքում ամփոփվել է Միջազգային ներդրումային իրավունքի ուղղվածությամբ Խորհրդատվական կենտրոնի (այսուհետ նաև «Կենտրոն») ստեղծման վերաբերյալ նախագծային փաստաթղթի երկրորդ ընթերցումը, ինչպես նաև քննարկվել է ներդրումային վեճերի լուծման բնագավառում արդի խնդիրների և ընթացակարգային կանոնների առնչությամբ հետագա քննարկումների օրակարգը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Ա) Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նստաշրջանի ընթացքում Խորհրդատվական կենտրոնի քննարկումները մեծամասամբ վերաբերել են այն խնդրահարույց հարցերի բարձրացմանը, որոնք քննարկվել էին դեռևս 46-րդ նստաշրջանի ընթացքում, և որոնց վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը մանրամասն ներկայացվել է:

Այս նստաշրջանի աշխատանքներին նեգրավվել էր նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Խորհրդատվական կենտրոնի գործադիր տնօրենը, որը մանրամասն ներկայացրեց կենտրոնի կառուցվածքը, գործառույթները և դրանց իրականացման եղանակները: Հաշվի առնելով ԱՀԿ Խորհրդատվական կենտրոնի հաջող փորձը՝ Աշխատանքային խումբը ստեղծվող Խորհրդատվական կենտրոնի կառուցվածքին և ֆինանսավորմանը վերաբերող դրույթները նախընտրեց մշակել ԱՀԿ Խորհրդատվական կենտրոնի կանոնադրությանը համաձայն: Այսպիսով, նախորդիվ որոշված երկաստիճան մեխանիզմը (*Կառավարման հանձնաժողով և Գործադիր տնօրեն*) փոխարինվեց կառավարման եռաստիճան մեխանիզմով (*կառուցվածքը համայրվեց Գործադիր հանձնաժողովով, որի կազմում ներառվելու է նաև Գործադիր տնօրենը*): Ինչ վերաբերում է կենտրոնի ֆինանսավորմանը, ապա ԱՀԿ Խորհրդատվական կենտրոնի նման որոշվեց պահպանել ֆինանսավորման երեք աղբյուրները՝ անդամ պետությունների վճարներ, նվիրատվություններ և ծառայության վճարներ: Միաժամանակ հաստատվեց հավատարմագրային ֆոնդի ձևավորման հարցը:

Հայաստանի անունից ներկայացվեց կենտրոնի հնարավոր անդամների տարբեր խմբերի դասակարգման կարևորությունը, որի հիման վրա կորոշվի ֆինանսական ներդրումների, կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների վճարների չափը և կենտրոնի ծառայություններից օգտվելու հաջորդականությունը: Նշվեց՝ թեև Հայաստանը համաձայն է, որ պետությունների յուրաքանչյուր կատեգորիայի համար անհրաժեշտ է սահմանել առանձին ցուցակ, այնուամենայնիվ, առաջարկվեց դիտարկել այդ ցուցակների հետագա վերանայման հնարավորությունը ինչպես անդամակցության ժամանակ, այնպես էլ դրանից հետո: Այդ նպատակով առաջարկվեց մշակել օբյեկտիվ չափանիշների ցանկ՝ ոգեշնչվելով արդեն իսկ գոյություն ունեցող դասակարգումներից, ինչպիսին ունի օրինակ Արժույթի միջազգային հիմնադրամը, և օգտագործել դրանք որպես «ցուցիչ» չափորոշիչներ:

Առաջարկվեց նաև, որ յուրաքանչյուր պետություն ինքնա-առաջադրմամբ որոշի, թե որ կատեգորիային է համապատասխանում, որից հետո վերջնական որոշումը կկայացնի կառավարման հանձնաժողովը՝ հիմնվելով հաստատված չափորոշիչների և որոշված մեթոդաբանության վրա: Նշվեց, որ անդամակցող պետության տնտեսական ցուցանիշները, ինչպիսիք են ՀՆԱ-ն, առևտրի ծավալները, ֆինանսական շուկաների հասանելիությունը, աղքատության մակարդակը պետք է մանրամասն ուսումնասիրվեն:

Միաժամանակ առաջարկվեց, որ Կառավարման հանձնաժողովը հնարավորություն ունենա իր նախաձեռնությամբ վերանայելու ցանկը, իսկ ստանդարտ վերանայման հաճախականությունն առաջարկվեց սահմանել երեք տարին մեկ անգամ:

Այս առաջարկները թեև սկզբնական փուլում որևէ աջակցություն չստացան, այնուամենայնիվ, նստաշրջանի հաջորդող օրերի ընթացքում որպես կոմպրոմիսային տարբերակ որոշվեց չափորոշիչների հիման վրա անդամ պետությունների ցանկերի նախնական հաստատում և դրանց պարբերաբար վերանայում Կառավարման հանձնաժողովի կողմից:

Ինչ վերաբերում է ներդրումային վեճերի լուծման բնագավառում արդի խնդիրներին և ընթացակարգային կանոններին, ապա Քարտուղարության կողմից մշակված դրույթների առնչությամբ բովանդակային քննարկում չձավալվեց. ընդամենը քննարկվեց հետագայում այս հարցերի ուսումնասիրման ժամկետները:

Բ) Հանդիպումները.

Նստաշրջանին մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ձեռք բերել ու ամրապնդել արժեքավոր գործնական կապեր, ծանոթանալ այլ պետությունները ներկայացնող պատվիրակների հետ և քննարկել հետագա համագործակցության հնարավորությունները: Առանձին հանդիպում է եղել Թայլանդի պատվիրակության հետ, որի ընթացքում քննարկվել է Կենտրոնի ստեղծման կարևորությունը: Թայլանդի պատվիրակությունը նաև նշել է, որ ցանկանում է հյուրընկալել Կենտրոնը Բանգկոկում: Այս առաջարկը, ի թիվս այլ պետությունների հնչեցրած նույնաբովանդակ առաջարկների (*Ֆրանսիա, Նիդերլանդներ, Պարագվայ և Գանա*), ներկայացվեց նաև նստաշրջանի քննարկման վերջին օրը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս նստաշրջանի ընթացքում Խորհրդատվական կենտրոնի ստեղծման վերաբերյալ նախագծային փաստաթղթի բոլոր դրույթները չքննարկվեցին, որոշվեց ներառել փաստաթղթի 9-11 հոդվածների, հավելվածների քննարկումը հաջորդ նստաշրջանի օրակարգում: Ըստ այդմ, փաստաթղթի շուրջ քննարկումները նախատեսվում է շարունակել Աշխատանքային խմբի հաջորդ նստաշրջանի և ոչ պաշտոնական առցանց քննարկումների ժամանակ՝ նպատակ ունենալով բարեփոխման վերջնական տարբերակը ներկայացնել ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի հաստատմանը՝ 2024 թվականին կայանալիք վերջինիս 57-րդ նստաշրջանի ընթացքում:

Ներդրումային վեճերի լուծման բնագավառում արդի խնդիրների և ընթացակարգային կանոնների շուրջ քննարկումները շարունակվելու են մինչև 2025 թվականը, հետևաբար այս թեմայով դեռևս վերջնական որոշումներ ու պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ակնկալվում է, որ ներկայացված առաջարկությունները և դիրքորոշումները, ինչպես նաև այն առաջարկությունները, որոնք կներկայացվեն հետագա ոչ պաշտոնական քննարկումների ընթացքում, հաշվի են առնվելու Կենտրոնի կանոնադրությունը մշակելիս և ընդգրկվելու են ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի հաստատմանը ներկայացվող փաստաթղթում: Ժամկետների առնչությամբ, որոնք

ամենայն հավանականությամբ լինելու են մինչև 48-րդ նստաշրջանի անցկացումը, ակնկալվում է Քարտուղարությունից ստանալ համապատասխան գրություն:



29 հունվարի 2024թ.